

ԹԻԼ 24270  
Փետր. 22, 1974

Արժանաշնորհ  
Տ. Լեւոն Բհնյ. Առաքելեան  
Հովիւ Սուրբ Համբարձում  
Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Նախագահ Եիսական Խորհուրդի  
Պրիմֆորթ, Քըն.

Սիրելի Տէր Լեւոն,

Ստացած ենք Փետրուար 18, 1974 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով  
կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Յունուար 20ին զուամբուած հա-  
մայնքիդ Եիսական ժողովին մէջ կատարուած է Եիսական Խորհուրդի երեք  
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝  
կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Եիսական ժողովը տեղի ունեցած է Թեմա-  
կան Անտնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք  
Եիսական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել Եիսական Խորհուրդի նորըն-  
տիր Գիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց  
ստենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Եիսական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵԳԻՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ

Ճորճ Մալճանեան  
Ռապրթ ճէզգաիրեան  
Տարուին Ժամկոչեան